ՄԱՅԱ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանի տնօրեն
m.grigoryan@sci.am
ORCID ID: 0000-0002-7989-0514
DOI: 10.54503/978-5-8080-1568-5-181

ՍԵՐԳԵՅ ՍԱՐԻՆՅԱՆԻ ՏՊԱԳԻՐ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԹՎԱՅԻՆ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ

Բանալի բառեր՝ *Սերգեյ Սարինյան, գիտական ժառանգություն, թվային տեխնոլոգիաներ, էլեկտրոնային քարտարան, էլեկտրոնային շտեմարան, թվայնացում, որոնման համակարգ, Վիքիպեդիա:*

Ներածություն

20-րդ դարի վերջից տեղեկատվական տեխնոլոգիաների արագ զարգացումը բեկումնային ազդեցություն է ունեցել գիտության, մշակույթի, կրթության, տնտեսության և հասարակության առանցքային ոլորտների վրա: Տեղեկատվության հավաքագրումը, պահպանումը և տարածումը դարձել են տեղեկատվական հասարակության կառուցման հիմնարար պայմաններից, ինչը նոր մարտահրավերների առաջ է կանգնեցրել հատկապես այն հաստատություններին, որոնց առաքելությունն է գիտական և մշակութային ժառանգության պահպանումը: Այս համատեքստում առանձնահատուկ են դարձել գրադարանները, արխիվները և թանգարանները, որոնց գործունեության կազմակերպման ձևերն ու մեթոդները վերանայվել են և որոնց ա-

ռաջադրվել են աշխատանքի կազմակերպման նոր, ավանդական աշխատելաոճին երբեմն հակասող պահանջներ[1]:

Տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը հատկապես զգալի ազդեցություն է թողել մատենագիտության վրա: Ավանդական մատենագիտական ցանկերին զուգահեռ զարգացել են էլեկտրոնային շտեմարանները՝ նոր հնարավորություններ ընձեռելով ինչպես գրադարանավարների, այնպես էլ ընթերցողների համար: Շտեմարանները տեղեկատվության տարածման մատենագիտական յուրահատուկ ձևեր են, որոնք ոչ թե հակասում են դասական մատենագիտությանը, այլ ներկայացնում են որոնման և մատուցման ժամանակակից տարբերակներ՝ ապահովելով արդյունավետություն և մատչելիություն[2]:

Այս հոդվածի նպատակն է ներկայացնել, թե թվային տեխնոլոգիաների զարգացման դարաշրջանում ինչ աշխատանքներ են տարվում ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանում՝ ուղղված ակադեմիկոս Սերգեյ Սարինյանի գիտական ժառանգության հավաքագրմանը, համակարգմանը և հանրայնացմանը: Նրա օրինակով քննարկվում են նաև այն գործընթացները, որոնց միջոցով հասանելի է դառնում ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսների տպագիր ժառանգությունը՝ նպաստելով գիտական ժառանգության պահպանմանն ու տարածմանը:

Սերգեյ Սարինյանի գրականագիտական ժառանգության թվային մատչելիության ապահովման ուղիները

ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանը, հետևելով ժամանակակից տեղեկատվական հասարակության պահանջներին, իրականացնում է ակադեմիկոս Ս. Սարինյանի գիտական ժառանգության թվայնացման և հանրայնացման համալիր ծրագիր՝ նպատակ ունենալով նրա գրականագիտական աշխա-

---

[1] **Զարգարյան Տ.,** *Թվային գրադարաններ*, Երևան, Հեղ. հրատ., էջ 18:

[2] **Մանուկյան Մ.,** *Մատենագիտությունը թվային դարաշրջանում*, «Լրատու Հայկական գրադարանային ասոցիացիայի», Երևան, 2023, թ. 2, էջ 32:

տությունները ներկայացնել նոր տեղեկատվական միջավայրում, ինչպես նաև՝ ապահովելով դրա հասանելիությունը և՛ մասնագիտական շրջանակների, և՛ լայն հանրության համար: Այս նախաձեռնությունն ընդգրկում է մի շարք ուղղություններ, որոնցից առանցքային են հետևյալը.

*1. Հեղինակային գրառման ստեղծում:*Հիմնարար գիտական գրադարանը, որը Հայաստանում առաջինն է թվային գործիքակազմի ներդրման և տարածման տեսանկյունից, պահպանում էբոլոր ակադեմիկոսներիգիտական աշխատությունները: Ս. Սարինյանը գիտական ժառանգությունն այդ շարքում է: Դրանք գիտական վերլուծություններ են, մենագրություններ, տարբեր գիտական ամսագրերում տպագրված հոդվածներ, որոնց բոլորի թղթային տարբերակները հասանելի են գրադարանում: Այս նյութերի մատենագիտական նկարագրություններն արտացոլված են ինչպես գրադարանի ավանդական (թղթային), այնպես էլ կայքէջից հասանելի էլեկտրոնային քարտարանում[3]:

Ավանդականքարտարանում այդ ժառանգությունը դասակարգված է, ինչը մեծապես նպաստում է նյութի արագ որոնմանը:Էլեկտրոնային քարտարանը ստեղծելիս գործել է նույն սկզբունքը, սակայն վերջնական արդյունքը տեսանելի դարձնելու համար հաղթահարվել են մի շարք խոչընդոտներ: Մասնավորապես, Ս. Սարինյանի նյութերը էլեկտրոնային քարտարանում ամբողջությամբ ներկայացնելու հարցը. ընթերցողը չէր կարողանում միանգամից ստանալ ամբողջական պատկեր նրա գիտական ժառանգության վերաբերյալ: Այս խնդրի լուծման նպատակով գրադարանի աշխատակիցների ջանքերով ստեղծվել է«Սերգեյ Սարինյան» հեղինակային գրառումը, որը ներա-

[3] ՀԳԳ էլեկտրոնային քարտարան https://opac.flib.sci.am/vufind/ (13.05.2025 թ.):

ռում է նրա հեղինակած, խմբագրած, համահեղինակած և նրա անունին առնչվող բոլոր տպագրությունները[4]:

Հեղինակային գրառումը ձևավորվել է հետևյալ սկզբունքներով՝

✓ Ս. Սարինյանի կենսագրական տվյալների ամբողջացում,

✓ անվան տարբեր ձևերի նույնականացում և միավորում,

✓ գրադարանի մատենագիտական քարտարանում առկա բոլոր նյութերի համակարգում և միավորում մեկ հղման տակ:

Այս մոտեցումը զգալիորեն բարձրացրել է որոնման արդյունավետությունը՝ ընթերցողին ընձեռելով մեկ մուտքով հասանելիություն հնարավորություն:

Ս. Սարինյանի գիտական ժառանգության թվայնացման և հեղինակային գրառման ձևավորման գործընթացում ի հայտ են եկել մի շարք խնդիրներ, որոնք նախկինում համատարած ուշադրության չեն արժանացել: Այդ խնդիրները բնորոշ են ոչ միայն նրա, այլև ՀՀ ԳԱԱ այլ ակադեմիկոսների գիտական ժառանգությանը, մասնավորապես՝ գրադարանում նյութերի ոչ լիարժեք ներկայացվածությունը: Համեմատելով գրադարանի հավաքածուում առկա գրքերը մատենագիտական այլ աղբյուրների, ցանկերի հետ՝ արձանագրվում է, որ մի շարք հրատարակություններ ֆիզիկապես բացակայում են, ինչի հետևանքով խաթարվում է տվյալ ակադեմիկոսի գիտական ժառանգության ամբողջական պատկերը: Այս արհեստական բացը խոչընդոտում է ինչպես նյութերի ամբողջական թվայնացմանը, այնպես էլ ընթերցողի՝ ամբողջական տեղեկատվություն ստանալու հնարավորությանը: Նման դեպքերում գրադարանի մասնա-

[4] **Սարինյան Ս.**, հեղինակային գրառում, https://shorturl.at/HJvCW (13.05.2025 թ.):

գետները նախաձեռնում են համագործակցություն գիտնականների ընտանիքի անդամների հետ՝ բացակայող նյութերի վերականգնումը հնարավոր դարձնելու համար: Ս. Սարինյանի պարագայում արդյունավետ համագործակցություն է հաստատվել նրա դստեր հետ, ինչի շնորհիվ հաջողվել է ձեռք բերել մի շարք պակասող նյութեր, որոնց մատենագիտական նկարագրությունները ներառվել են ինչպես ավանդական, այնպես էլ էլեկտրոնային քարտարանում:

Աշխատանքը խորքային նշանակություն ունի ոչ միայն մատենագիտական ամբողջականության, այլև գիտական ժառանգության պահպանման և հանրայնացման տեսակետից: Գրադարանի դիրքորոշումը հստակ է՝ ակադեմիկոսների գիտական ժառանգությունը համարվում է հանրության և գիտության սեփականություն, ուստի պետք է հասանելի լինի ներկա և ապագա սերունդներին

Ներկայում աշխատանքներ են տարվում, որպեսզի հեղինակային գրառումը հարստացվի նաև լրացուցիչ տեղեկատվական աղբյուրներով: Մասնավորապես, նախատեսվում է գրառման մեջ ներառել Սարինյանի մասին Վիքիպեդիայի համապատասխան էջի հղումը՝ ընթերցողին ապահովելով կենսագրական և գիտական գործունեության մասին ամբողջական տեղեկատվությամբ:

2.Սերգեյ Սարինյանի տպագիր ժառանգության թվայնացման գործընթացը: Ս. Սարինյանի տպագիր ժառանգության թվայնացումը ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանի ռազմավարական առաջնահերթություններից է՝ որպես Գիտությունների ազգային ակադեմիայի ամբողջ գիտական ժառանգության թվայնացման ծրագրի բաղկացուցիչ մաս: Այս գործընթացը միտված է գրականագետի գիտական, վերլուծական և հրապարակախոսական գործունեության արդյունքների

պահպանմանը, հանրայնացմանը և լայն հասանելիությանը՝ արդի թվային միջավայրում:

Թվայնացման աշխատանքներն իրականացվում են մի քանի փուլով՝

✓ համապատասխան տպագիր նյութերի մատենագիտական ցանկի կազմում,

✓ նյութերի տեսածրում (փորձագիտական վերլուծություն՝ թվայնացման նպատակահարմարության տեսանկյունից),

✓ տեսածրում և թվայնացում,

✓ թվային նյութերի ներառում էլեկտրոնային շտեմարաններում՝ լրացված մատենագիտական նկարագրությամբ:

Բոլոր թվային նյութերը ներառվում են Համահայկական թվանշային գրադարան[5]՝ համապատասխան մատենագիտական նկարագրությամբ և թվային պատճենով, որպեսզի ընթերցողը կարողանա միանգամից կարդալ նյութը: Պահպանվում են հեղինակային իրավունքի բոլոր կանոնները: Ս. Սարինյանի գիտական ժառանգության պարագայում հեղինակային իրավունքը պատկանում է ինչպես նրա ընտանիքին, այնպես էլ ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիային: Գրադարանի և Սարինյանի հարազատների միջև ձևավորված համագործակցության արդյունքում լուծվել է նաև նյութերի թվայնացման և հանրային հասանելիության ապահովման խնդիրը:

Թվայնացված նյութերի զգալի մասը Ս. Սարինյանի հոդվածներն են, որոնք տպագրվել են տարբեր ակադեմիական, գիտական հանդեսներում: Ներկայում դրանք հասանելի են բաց մատչելիության սկզբունքով՝ շտեմարանում ընթերցելու, ներբեռնելու հնարավորություններով: Այս մոտեցումը համապատասխանում է բաց գիտության և բաց մատչելիության միջազ-

[5] Համահայկական թվանշային գրադարան https://arar.sci.am (13.05.2025 թ.):

գային սկզբունքներին, ըստ որոնց՝ գիտական ժառանգությունը պետք է ծառայի հանրությանը և լինի հասանելի ինչպես մասնագետների, այնպես էլ ուսանողների և հետաքրքրված հանրության համար:Ս. Սարինյանի տպագիր ժառանգության թվայնացումը ոչ միայն ապահովում է նրա գիտական աշխատանքների պահպանումը, այլև նպաստում է դրանց շարունակական օգտագործման հնարավորությանը ժամանակակից գիտահետազոտական միջավայրում:

3. Տեղեկատվության ամբողջացում և մեկ հարթակի ներկայացում: Թվային դարաշրջանի պահանջներն ու գիտության տեղեկատվական ենթակառուցվածքների վերափոխման գործընթացը ձևավորել են նոր մոտեցումներ նաև գիտական ժառանգության մատենագիտական ներկայացման ու հասանելիության ապահովման գործում: Այս համատեքստում ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանը, ընդառաջ գնալով ՀՀ ԳԱԱ հիմնադրման 70-ամյակի հոբելյանական տարուն, 2008 թվականից նախաձեռնել է **«ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսների կենսամատենագիտություններ»** էլեկտրոնային շտեմարանի ստեղծման աշխատանքները[6]:Այն միտված է մեկտեղելու ակադեմիկոսների կյանքի, գիտական գործունեության և տպագիր ժառանգության վերաբերյալ համապարփակ տեղեկատվություն՝ ապահովելով համակարգված մատենագիտություն, արագ որոնման հնարավորություններ և լիարժեք թվային հասանելիություն:

Յուրաքանչյուր շտեմարանի ձևավորում ենթադրում է՝

✓ հստակ գիտական նպատակադրում (յուրաքանչյուր ակադեմիկոսի վերաբերյալ ամբողջական պատկերի ապահովում),

✓ բովանդակության կառուցվածքային մշակում,

[6] https://shorturl.at/fh9Kd (13.05.2025 թ.):

✓ տեխնիկական ապահովում(ծրագրային միջավայր, միջերես),

✓ հեղինակայինիրավունքինորմերիպահպանում:

Վերջին կետի հետ կապված նշենք, որ քանի որ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսների մեծ մասը գործել է հենց ակադեմիայի համակարգում, հեղինակային իրավունքի հարցերը հիմնականում կարգավորված են եղել և չեն խոչընդոտել տվյալների թվայնացմանը:

«Ակադեմիկոսների կենսամատենագիտություններ» շտեմարանն ի սկզբանե նպատակ ուներ համակարգված կերպով ներկայացնելու ակադեմիկոսների կյանքի, գիտական գործունեության և տպագիր ժառանգության մասին տեղեկատվությունը: Շտեմարանը ձևավորվել է որպես միասնական թվային դաշտ՝ մատենագիտական, կենսագրական և արխիվային տվյալների ընդգրկմամբ: Արդյունքում, տարիների ընթացքում այն համալրվել է շուրջ 200 ակադեմիկոսների վերաբերյալ մանրամասն տեղեկություններով:

Թվային տեխնոլոգիաների արագ զարգացումը, գիտության առաջընթացն ուղեկցող նոր չափորոշիչները, սակայն, ձևավորել են նոր տեղեկատվական պահանջներ: Մասնավորապես, ակադեմիական հանրության կարիքը փոփոխվել է՝ ուղղվելով ոչ միայն տեղեկատվության առկայությանը, այլ դրա հասանելիության արդյունավետությանը: Նման փոփոխությունների արդյունքում պարզ է դարձել, որ կայուն, սակայն սահմանափակ հնարավորություններով դասական շտեմարանը այլևս բավարար չէ՝ լիարժեք սպասարկելու ժամանակակից հետազոտողի պահանջները:

Այս իրողությունների հիմքի վրա 2023 թ. հունվարից շտեմարանը վերածվել է էլեկտրոնային մի մեծ հարթակի, որի նպատակն է մեկտեղել տվյալ ակադեմիկոսի վերաբերյալ է-

լեկտրոնային աղբյուրները, ապահովել աղբյուրների միավորումը մեկ մուտքային կետում և կազմակերպել գիտական ժառանգության մատչելիության գործընթացն առանց բարդ որոնողական գործիքակազմի:

Հարթակը ստացել էմեկ պատուհանի սկզբունքով տեղեկատվության մատուցման գործառույթ, ինչը հնարավորություն է տալիս օգտատիրոջը, անկախ իր մասնագիտական պատրաստվածության աստիճանից, արագ գտնել ցանկացած ակադեմիկոսի, այդ թվում՝Ս. Սարինյանի մասին բոլոր մատենագիտական, կենսագրական և լրացուցիչ տվյալները՝ ներառյալ առցանց հրապարակումները, տեսանյութերը, վերլուծությունները, ինչպես նաև ուղղակի հղումները այլ հեղինակավոր աղբյուրների (օր.՝ Վիքիպեդիա, Համահայկական թվանշային գրադարան, գրադարանի էլեկտրոնային քարտարան և այլն):Կարող ենք ընդգծել, որ էլեկտրոնային հարթակը դարձել է կարևոր տեղեկատվական հանգույց՝ զուգորդելով տեղեկատվության հավաքագրման, պահպանման և հանրայնացման գործառույթները:

Ինչպես արդեն նշեցինք, Ս. Սարինյանը, որպես ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ներկայացված է այս հարթակում: Առանձնացված են նրա կյանքի ու գործունեության տարեգրությունը, կենսագրական հիմնական հանգույցները, ինչպես նաև **երկմասյա մատենագիտությունը**, որը ներառում է Ս. Սարինյանի հեղինակած աշխատությունների և գիտական հրապարակումների ցանկը, ինչպես նաև նրա մասին առկա նյութերը (հոդվածներ, անդրադարձներ, վերլուծություններ):

Գիտական ժառանգության թվայնացման և հանրայնացման գործընթացում առաջնահերթ նշանակություն է վերագրվում կենսագրական տվյալների հավաստիությանը: Ժամանակակից թվային միջավայրում հաճախ հանդիպում են ոչ լիարժեք կամ փաստացի անճշտություններով հագեցած կենսագրա-

կան տեղեկություններ, որոնք կարող են տեղեկատվական շփոթ առաջացնել ինչպես լայն հանրության, այնպես էլ մասնագիտական շրջանակների մեջ: Այս համատեքստում ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանը կարևորում է ճշգրիտ, փաստաթղթային հենքով ստուգված կենսագրական տեղեկատվության ներառումը էլեկտրոնային հարթակում:Մասնավորապես, Ս. Սարինյանի գիտական և անձնական կենսագրության տվյալների ճշգրտման գործընթացում իրականացվել է հետևողական համագործակցություն գիտնականի ընտանիքի հետ, ինչը հնարավոր է դարձրել ներկայացնել փաստացի ստուգված և հավաստի տեղեկատվություն: Այս գործընկերային մոտեցումը նպաստել է ոչ միայն կենսագրության ամբողջացմանը, այլև բարձրացրել է տվյալների վստահելիության մակարդակը՝ բացառելով ապակողմնորոշող և ոչ ակադեմիական աղբյուրների ազդեցությունը:Այս մեթոդաբանական մոտեցումը դիտարկվում է որպես լավագույն փորձ, որը կիրառվում է նաև գրադարանի կողմից թվայնացվող այլ ակադեմիկոսների գիտական ժառանգության դեպքում:

Գրականագետի կենսամատենագիտություն, ինչպես նշեցինք, կառուցված է երկաստիճան սկզբունքով՝ ընդգրկելով ինչպես նրա հեղինակած աշխատությունները (գրքեր, հոդվածներ, մենագրություններ), այնպես էլ իր անձի վերաբերյալ գիտական և հրապարակային նյութերը: Վերջիններիս ծավալով ու բնույթով է պայմանավորված աշխատանքի փուլային և շարունակական բնույթը: ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանի մատենագետները մասնագիտական մշակում են իրականացնում յուրաքանչյուր նյութի հետ՝ ապահովելով տվյալների ճշգրտումը, մատենագիտական նկարագրությունը և թվային մատուցումը:

Յուրաքանչյուր գրառում ներկայացվում է նաև հիպերհղման տեսքով՝ ընթերցողին ուղղորդելով դեպի համապատասխան թվային աղբյուրը: Եթե աշխատությունը հասանելի է գրադարանի էլեկտրոնային քարտարանում, հղումը տանում է դեպի համապատասխան էջ, որտեղ ընթերցողը կարող է պատվիրել կամ տեղում ծանոթանալ տպագիր նյութին: Եթե աշխատությունը թվայնացվել է և ներառվել է Համահայկական թվանշային գրադարանում, ապա հղումը տանում է նյութի ամբողջական էլեկտրոնային տարբերակին՝ ուղեկցված մատենագիտական նկարագրությամբ:Նույն մոտեցումը կիրառվում է Ս. Սարինյանի վերաբերյալ նյութերի պարագայում՝ անկախ դրանց տեսակից կամ ծագման աղբյուրից:

Աղբյուրների բնույթը, որոշ դեպքերում դժվար հայտնաբերման հանգամանքը ենթադրում են շարունակական համագործակցություն: Այս առումով գրադարանը մշտապես համագործակցում է ինչպես ակադեմիկոսի ընտանիքի անդամների, այնպես էլ հրատարակչությունների և գիտական կառույցների հետ՝ տեղեկատվության ամբողջականության ապահովման նպատակով:

Հարթակում հավաքագրվում են համացանցում առկա բոլոր աղբյուրները՝ բազմալեզու բովանդակությամբ՝ ընթերցողին տրամադրելով տեղեկատվություն «մեկ պատուհանի» սկզբունքով: Ներառվում են նաև Ս. Սարինյանին նվիրված տեսահոլովակները, որոնք դիտարկվում են որպես վավեր տեղեկատվական աղբյուրներ:

Գրադարանը ակտիվ համագործակցում է Վիքիպեդիայի հետ՝ համատեղ վերանայելով և լրացնելով ակադեմիկոսի կենսագրական էջը[7]: Վիքիպեդիայի հոդվածը ներդրված է գրադարանի էլեկտրոնային շտեմարանում, իսկ Վիքիպեդիայի աղբ-

[7] **Սարինյան Ս.,** https://shorturl.at/DfcvF (13.05.2025):

յուրների և ծանոթագրությունների բաժնում տեղադրված են ուղիղ հղումներ՝ հնարավորություն ընձեռելով ընթերցողին անմիջապես անցում կատարել դեպի շտեմարանի համապատասխան բաժիններ՝ ծանոթանալու Ս. Սարինյանի գիտական աշխատանքներին:Այս համակարգված մոտեցումը նպաստում է ինչպես ընթերցողի տեղեկատվական հարմարավետությանը, այնպես էլ գրականագետի գիտական ժառանգության հանրայնացմանը՝ մատչելի դարձնելով այն լայն լսարանին՝ անկախ որոնման հարթակից կամ օգտագործվող լեզվից:

Եզրակացություններ

Ս. Սարինյանի տպագիր ժառանգության թվայնացումը գիտության զարգացման կարևոր մարտահրավերներից մեկն է: Այն ոչ միայն ապահովում է արժեքավոր գիտական նյութերի պահպանումն ու մատչելիությունը, այլև ստեղծում է նոր հնարավորություններ հետազոտողների, ուսանողների և գրականության սիրահարների համար՝ ծանոթանալու հայ գրականագիտության հիմնարար հարցերին՝ գիտնականի տեսլականի և վերլուծությունների միջոցով:Թվային դարաշրջանում նման նախաձեռնությունները ծառայում են գիտական հիշողության վերականգնմանն ու փոխանցմանը՝ միաժամանակ հարստացնելով ազգային գրական-մշակութային դաշտը: Ս. Սարինյանի գիտական ժառանգության առցանց հասանելիությունը մի նոր փուլ է՝ ուղղված ոչ միայն նրա աշխատանքների արժևորմանը, այլև նոր ուսումնասիրությունների, վերլուծությունների և գիտական երկխոսության խթանմանը:

МАЙЯ ГРИГОРЯН
Фундаментальная научная библиотека НАН РА
Кандидат филологических наук

ПЕЧАТНОЕ НАСЛЕДИЕ СЕРГЕЯ САРИНЯНА В ЦИФРОВУЮ ЭПОХУ

Резюме

Оцифровка печатного наследия академика Сергея Сариняна представляет собой важный этап в развитии современной гуманитарной науки и сохранении национального интеллектуального достояния. Реализация данного проекта обеспечивает не только сохранность и долговременный доступ к ценным научным материалам, но и создает новые перспективы для научных исследований, образовательных инициатив и культурной коммуникации.

Предоставляя возможность исследователям, студентам и широкой аудитории обращаться к фундаментальным вопросам армянского литературоведения сквозь призму научных трудов С. Сариняна, оцифровка способствует укреплению преемственности научной традиции и актуализации культурной памяти. В условиях цифровой эпохи такие инициативы приобретают особую значимость, выступая механизмом восстановления, трансляции и интерпретации научного наследия.

Доступность научного вклада Сариняна в онлайн-среде знаменует собой новый этап как в осмыслении и признании его научного наследия, так и в стимулировании междисциплинарного анализа и научного диалога. Таким образом, цифровая репрезентация трудов ученого способствует не только сохранению, но и активному использованию научного и культурного потенциала в современном исследовательском пространстве.

Ключевые слова: *Сергей Саринян, научное наследие, цифровые технологии, электронный каталог, электронная база данных, оцифровка, поисковая система, Википедия.*

MAYA GRIGORYAN
Fundamental Scientific Library of the NAS RA
Ph.D. in Philology

SERGEY SARINIAN'S PRINTING HERITAGE IN THE DIGITAL AGE

Abstract

The digitization of Sergey Sarinyan's printed heritage represents a significant step in the advancement of scientific knowledge and the preservation of national intellectual capital. This initiative not only safeguards and ensures long-term accessibility to valuable scholarly materials but also opens new avenues for academic research, education, and public engagement. By enabling researchers, students, and literary enthusiasts to explore core issues of Armenian literary studies through Sarinyan's scholarly lens, the project contributes to the continuity of scientific inquiry and cultural memory.

In the context of the digital age, such efforts are essential for revitalizing and transmitting the intellectual legacy of past generations. The online availability of Sarinyan's scientific contributions marks a new phase – not merely in recognizing his academic achievements –but in fostering renewed scholarly interest, interdisciplinary analysis, and informed dialogue. Ultimately, this endeavor enriches the Armenian literary and cultural landscape and underscores the vital role of digital technologies in preserving and promoting national heritage.

Keywords*: Sergey Sarinyan, Scientific Heritage, Digital Technologies, Electronic Catalog, Electronic Database, Digitization, Search Engine, Wikipedia.*